է, որ այդ նորոգությունը տևել է 3—4 տարի, մինչև հայոց ՈԼԳ (633+551=1184) թվականը։

Մեզ շափազանցություն է թվում Հովհաննես առաջնորդի այն հայտարարությունը, որ իբրև թե ինքը շինել է երբեմն գոյություն ունեցող եկեղեցին («շինեցի զերբեմն լեալ զեկեղեցիս»), թեպետ շինել բառն անցյալում հաճախ գործ է ածվել նորոգելու իմաստով ևս, իսկ այսօրվա հասկացողությամբ շինել բառի համար հնում հաճախ գործ են ածել շինել ի խամոյ, շինել ի հիմանց դարձվածքները։

Ամենափրկիչ եկեղեցին շինվել էր այդ նորոգությունից ընդամենը 215 տարի առաջ իր, մինչև մեր օրերը պահպանված, ամբակուռ պատերով և գեղեցիկ, եկեղեցու շուրջը պարբոնող որմնակամարներով։ Նրա արտաքինի վրա մեծ մասամբ պահպանվել են սկզբնական կառուցվածքի գեղեցիկ հարդարանքները, իսկ այն տեղերում, որտեղ այդ հարդարանքները չկան, երևում է, որ փոխվել են միայն պատերի երեսապատ քարերը և ոչ թե քանդվել ու նորից են շինվել դրանք։ Արևմտյան պատի վրա, գավթի մեջ, պահպանվել են հին եկեղեցու բոլոր հարդարանքներն առանց որևէ նորոգության, միայն թե պատին կից հետագայում շինել են ներքին ժամատան որմնասյուները։

Տուտեորդին իր խաչքարի արձանագրության մեջ Հովհաննեսի այդ աշխատանքները համարում է պարզապես նորոգություն և ոչ թե վերաշինություն։ Նա իր խաչքարի մասին գրում է.

«Կանգնեցաւ ի հայրութեան Յովհաննիսի, յորում ամի նորոգեցաւ կաթողիկէս սուրբ ի թուս(իս) ՈԼԳ»։

Համենայն դեպս այդ, ինչպես նաև դրանից հետո կատարված նորոգությունները եկեղեցու կառուցվածքի մեջ որևէ փոփոխություն չեն մտցրել, այլ միայն ամրապնդել են նրա խարխլած մասերը, իհարկե, բացի գմբեթից, որ հիմնովին վերաշինվել է այդ նորոգության միջոցին։

Սակայն այդ ընթացիկ նորոգությունների հետևանքով եկեղեցին կորցրել է իր ծածկի սկզբնական սալքարերը, բոլոր կողմերի քիվերը և տաճարի մի շարք տեղերում պատերի երեսապատ քարերը, որ փոխարինվել են նորով։

Այնուհետև Ամենափրկիչ եկեղեցին նորոգվել է 1652 թվականին՝ վանքի ընդհանուր նորոգության հետ միասին, Արղությանց Սարգիս արքեպիսկոպոսի առաջնորդության ժամանակ և ուստա Սարգսի ղեկավարությամբ։ Երկու անգամ էլ նորոգվել է 19-րդ դարում, որոնցից մեկը 1815 թվականին՝ Արղությանց Սոլոմոն հաղարապետի և Զաքարև իշխանի ծախսով (արձ. 66) և մյուսը 1881 թվականին՝ Արղությանց Հովսեփ Փարսադանյանի «անձամբ անձին վերակացությամբ և իմով աշխատանօք», որոնց ընթացքում նորոգվել են տաճարի գմբեթը և ծածկի սալքարերը (արձ. 11)։

Վերջին նորոգությունները կատարել է Ճարտարապետական հուշարձանների պահպանության կոմիտեն 1939—1940 և հետագա տարիներին։

3. Ամենափրկչի ժամատուն (ներքին գավիթ)։ Կառուցվել է ի հիմանց 1181 թվականին Հովհաննես առաջնորդի կողմից, ամիր Քրդի և Գրիգոր վարդապետ Տուտեորդու օժանդակությամբ (արձ. 12)։ Կառուցմանը մասնակցել են նաև Լոռվա Կյուրիկե Գ թագավորի Մարիամ, Բավրինա, Ռուսուդան աղջիկները և նույն Կյուրիկեի կնոջ՝ Թամարի հորաքույր Ռուսուդանը, որոնցից յուրաքանչյուրն իր հիշատակին կանգնեցրել է գավթի կենտրոնական շորս սյուներից մեկը (արձ. 28, 29, 30, 31)։

Իբրև հիշատակ իր օժանդակության՝ Տուտեորդին մի փոքրիկ արձանագրություն է դետեղել գմբեթի ներսում, նրա հիմքի վրա, որ հետևյալ բովանդակությունն ունի՝

«Զ Գրիգոր վարդապետ որդի Տուտայ յիշեսջիք ի Քս Յս» (արձ. 35)։

Գավթի կառուցող գլխավոր վարպետը մինչև այժմ անհայտ մնացած Ժամհայրն է, որի արձանագրությունը պահպանվել է իր շինած գավթի հարավ արևելյան որմնասյան կամարի վրա։ Այդ արձանագրության մեջ ասվում է, որ Աստվածածնի ավետման տոնի պատարագը բոլոր եկեղեցիներում գավթի շինող Ժամհորն է նվիրվում անխափան (արձ. 32)։ Ժամհայր անունը, որ ծանոթ է նաև Շամշադինի շրջանի Շխմուրատա վանքի մի արձանագրությունից, Շահխաթունյանը կարդացել է ժամ առնեն:

Գավիթը գրեթե հավասարակողմ քառանկյունի մի դահլիճ է, շինված կաթուղիկե